



«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ  
 Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010  
 Վ.Սարգսյանի փ. 26/1  
 «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ  
 Հեռախոս + 374 (10) 595 999  
 Վեբ կայք www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

### «Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

#### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ» կրթական հիմնադրամի («Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

#### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամի՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների, և կատարել ենք Էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

#### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Հիմնադրամը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:



### Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են եական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի եական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են եական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է եական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է եական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:



Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան  
Ղեկավար գործընկեր, «ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ԶԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի տնօրեն



KPMG Armenia LLC

«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ԶԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ  
30 հունիսի 2021թ.



**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	130,210	76,036
Ավանդներ բանկերում		141,332	71,477
Տրամադրված փոխառություններ	6	122,326	131,776
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	7	20,327	31,513
Պաշարներ	8	92,174	11,941
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		<b>506,369</b>	<b>322,743</b>
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9	3,453,291	3,553,310
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		31,182	-
Հետաձգված հարկային ակտիվներ	15	15,661	14,387
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>3,500,134</b>	<b>3,567,697</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>4,006,503</b>	<b>3,890,440</b>
<b>Պարտավորություններ և Հիմնադրամի միջոցների մնացորդ</b>			
Հետաձգված հասույթ ուսման վարձերի գծով		199,117	188,445
Վարձակալության գծով պարտավորություններ		5,118	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	10	73,799	70,685
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	126,343	74,426
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	127,905	140,738
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		<b>532,282</b>	<b>474,294</b>
Վարձակալության գծով պարտավորություններ		22,346	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	3,411,556	3,404,511
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>3,433,902</b>	<b>3,404,511</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>3,966,184</b>	<b>3,878,805</b>
Կուտակված ավելցուկ		40,319	11,635
<b>Հիմնադրամի միջոցների մնացորդ</b>		<b>40,319</b>	<b>11,635</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և Հիմնադրամի միջոցների մնացորդ</b>		<b>4,006,503</b>	<b>3,890,440</b>

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2020թ. համար**

հազ. դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Հասույթ	13	909,101	903,096
Եկամուտ նվիրատվություններից	14	131,898	357,684
Այլ եկամուտ		5,591	1,926
		<b>1,046,590</b>	<b>1,262,706</b>
Անձնակազմի գծով ծախսեր		(691,536)	(778,436)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս		(131,898)	(140,738)
Այլ ծախսեր	15	(197,614)	(348,778)
<b>Գործառնական գործունեության արդյունքներ</b>		<b>25,542</b>	<b>(5,246)</b>
Չուտ ֆինանսական եկամուտ		5,923	5,246
<b>Շահույթ նախքան շահութահարկով հարկումը</b>		<b>31,465</b>	<b>-</b>
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	16	(2,781)	1,059
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար</b>		<b>28,684</b>	<b>1,059</b>

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գավիթ Սահակյան  
Գործադիր տնօրեն



Արմինե Հովհաննիսյան  
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 38-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: